**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2021 թվականի N 156-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.2021 թվականի մայիսի 11-ին անցկացնել մրցույթ համայքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ տեղակալի (ծածկագիր՝2.2-1), ժամը՝ 10:30,

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների հավաքագրման և գանձման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-1), ժամը՝ 12 :30:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-3), ժամը՝ 14:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մարտի 29
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2021 թվականի N 157-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՌԻՄԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՇՄԱՎՈՆԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ռիմա Բաղդասարյան Շմավոնի»-ի 2021 թվականի մարտի 30-ի N34 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր,Կ.Դեմիրճյան փողոց, թաղամաս 5, թիվ 79 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ռիմա Բաղդասարյան Շմավոնի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մարտի 30
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

31 մարտի 2021 թվականի N 158-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0278-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ԱՐԱՄԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Արամի Սուքիասյանի (անձնագիր՝ 000830943, տրված՝ 07.12.2012-ին, 039- կողմից) դիմումը (մուտք՝ 26.02.2021-ին, ՄԴ-80-21), «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ և 62-րդ կետերով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 06-008-0278-0001 կադաստրային ծածկագրով 0.04 հա հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Աշոտ Արամի Սուքիասյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ , Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 14, Օզյորնայա փողոց, հողամաս թիվ 8 հասցեում գտնվող, 06-008-0278-0001 կադաստրային ծածկագրով 0,04 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ , Տաշիր համայնք, ք. Տաշիր, թաղամաս 14, Լճափնյա փողոց, թիվ 1/2 հողամաս:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մարտի 31
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2021 թվականի N 159-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0278-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ԱՐԱՄԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Արամի Սուքիասյանի (անձնագիր՝ BA2618688, տրված՝ 15.01.2016-ին, 053- կողմից) դիմումը (մուտք 26.02.2021. ՄԴ-79-21), «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ և 62-րդ կետերով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված06-008-0278-0001 0.04 հա հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Արմեն Արամի Սուքիասյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ , Տաշիր համայնք, ք. Տաշիր , թաղամաս 14, Օզյորնայա փողոց, հողամաս թիվ 7 հասցեում գտնվող, 06-008-0278-0001 կադաստրային ծածկագրով 0,04 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասին տրամադրել փոստային հասցե ՝ ՀՀ Լոռու մարզ , Տաշիր համայնք, ք. Տաշիր, թաղամաս 14, Լճափնյա փողոց, թիվ 1/3 հողամաս:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մարտի 31
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2021 թվականի N 160-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 98-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺՆ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 26-ի «Հյաաստանի Հանրապետության Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լենհահովիտ Հրապարակ 3/1 հասցեում գտնվող 06-039-0027-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ Վարդգես Արմայիսի Հակոբյանի սեփականության իրավունքը ճանաչելու և Հյաաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 11-ի N75-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » N98-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մարտի 31
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2021 թվականի N 161-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33-րդ և 34-րդ կետերը, 35-րդ կետի գ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի 9 դեկտեմբերի N 2387-Ն որոշում հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 52-րդ կետով, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն, 06-039-0027-0002 կադաստրային ծածկագրով 0,00854 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք, Լեռնահովիտ բնակավայր (06-039-0027-0002 ծածկագրով) համայնքին պատկանող 0,00854 հա հողամասի վրա քաղաքացի Վարդգես Արամայիսի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված 70,07քմ մակերեսով ամառային խոհանոցի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 70,07քմ մակերեսով ամառային խոհանոցը համարել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են «ԱրտյոմՍաքանյան» ԱՁ-իկողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վարդգես Արամայիսի Հակոբյանի առաջարկել, օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1) Հողամասի համար՝ 12120 (տասներկու հազար հարյուր քսան) ՀՀ դրամ,
2) Ամառային խոռանոց՝ 75115 / յոթանասունհինգ հազար հարյուր տասնհինգ / դրամ:

5. Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Լեռնահովիտ, 5-րդ փողոց, թիվ 3:

6. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. մարտի 31
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2021 թվականի N 162-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով և հիմք ընդունելով համար 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Ցողիկ Սուրենի Պետրոսյանի դիմումը ( մուտք՝ 29.03.2021-ի ՄԴ-138)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մինչև 2021 թվականի ապրիլի 19-ը դադարեցնել համար 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատանքային գործունեությունը:

2. Համար 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրենին՝ մինչև ապրիլի 19-ը ավարտել տանիքի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքները:

3. Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձը վճարել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. մարտի 31
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2021 թվականի N 163-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ,ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԹԱՂԱՄԱՍ 5 ,ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 90 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կառլեն Նիկոլայի Սուքիասյանի (անձնագիր՝ AN 0715743, տրված՝ 18.11.2013-ին) դիմումը (մուտք՝ 27.01.2021-ին, ՄԴ-31-21), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 1825723 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ կետերով նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 5, Պուշկինի փողոց, թիվ 90 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-104-008) Կառլեն Նիկոլայի Սուքիասյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,108հա հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 340.48քմ մակերեսով շինությունները՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի.

1) Բնակելի տունը՝ 254.6քմ,
2) Ավտոտնակը՝ 47.88քմ,
3) Պարիսպը՝ 27.5քմ,
4) Կաթսայատուն՝ 8.8քմ,
5) Սանհանգույց՝ 1.7քմ

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Կառլեն Նիկոլայի Սուքիասյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ 350014(երեք հարյուր հիսուն հազար տասնչորս ) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. ապրիլի 01
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2021 թվականի N 164-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՄԵՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Մերուժան Մուրադյան Վոլոդյայի»-ի 2021 թվականի ապրիլի 1-ի N35 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի 843-Ն որոշումով հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 171 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Մերուժան Մուրադյան Վոլոդյայի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. ապրիլի 01
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ապրիլի 2021 թվականի N 165-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ) ենթակետը, 50-րդ և 62-րդ կետերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Հերմինե Լավրենտի Փեթակչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2453253, տրված՝ 31.01.2008-ին) Լոռու մարզ, քաղաք Տաշիր, փ. Գետափնյա, թաղ-10, տուն-129Ա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, փողոց Գետափնյա, թաղամաս 10, թիվ 129/1 բնակելի տուն փոստային հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. ապրիլի 01

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 ապրիլի 2021 թվականի N 166-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆՈՒՀԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արմենուհի Ռաֆայելյան»-ի 2021 թվականի ապրիլի 2-ի N36 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 200 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արմենուհի Ռաֆայելյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. ապրիլի 02
ք.Տաշիր